ԳԱՐԵԳԻՆ Բ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԾՄԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(4 նոյեմբեր, 1999 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:

«Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» /ԳԱՂ. Զ 14 /:

Գոհություն և փառք Քեզ, Տեր, Մայր Տաճարի՝ աղոթքով ու լույսով ողողված Ավագ Խորանի վրա Քո կամքով և ընտրությամբ ժողովրդիս, այսօր՝ Խաչի կիրակիների շարքում Սուրբ Հայրապետների հիշատակի օրը, հոգևոր իմ եղբայրների՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Հայոց Ամենապատիվ Սրբազան Պատրիարքների և Գերաշնորհ արքեպիսկոպոսների ձեռնադրությամբ և օծմամբ, ահա իշխանությունն ստացա առաջին սպասավորը լինելու Առաքելական մեր Մայր Եկեղեցու՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, որպես Լուսավորչի Աթոռի 132-րդ գահակալ: Հովվապետի դժվարին առաքելությունը ստանձնեցի Աստծո և ժողովրդիս կամքին խոնարհվելով, Հայրենիքիս, ժողովրդիս ու Աստծու առաջ պարտքս ամբողջապես հատուցելու գիտակցությամբ: Ծառայությանս ուխտի նորոգման այս պահին վերստին գոհություն և փառք եմ մատուցում Բարձրյալին, **«որ զորացրեց ինձ մեր Տեր Հիսուս Քրիստոսով, որ հավատարիմ համարեց ինձ այս սպասավորությանը կարգելու»** /Ա ՏԻՄ. Ա 12/:

Քո Եկեղեցուն և Քո ժողովրդին ծառայելու նորոգ ուխտիս մեջ արիացրու ինձ, Տե՛ր, և ապավեն եղիր, տուր շնորհը՝ բարձրացնելու ինձ վստահված խաչը, կրելու հանուն Քո խաչի բազմիցս խաչված, խաչով հաղթանակած հոտիդ առաջնորդության պատասխանատվությունը: Գիտեմ ծանրությունը Քո խաչի, գիտեմ և զորությունը նրա: Եվ **«ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»**:

Սիրելի հավատացյալ հայորդիք, ներեկեղեցական և ներազգային բազում խնդիրներ ունենք՝ ինչպես պատմական՝ անցյալից ժառանգած, այնպես և ներկա՝ անկախ պետականության կերտման ճանապարհին: Չեմ երկնչում, որքան էլ բարդ ու դժվարին և խորարմատ են կուտակված այդ խնդիրները հայրենական մեր կյանքում, քանզի Հարուցյալ Տերն է իմ հույսը և հայրերիս Աստվածն է իմ ապավենը, և ի սեր Քրիստոսի, գործակից ունեմ առավել փորձառու իմ հոգևոր եղբայրներին, Առաքելական մեր Սուրբ

Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալներին, թեմական ջանադիր առաջնորդներին, հավատավոր ողջ հոգևոր դասը, որոնց հետ միասնաբար պիտի հաղթահարենք բոլոր դժվարությունները, հարթենք բոլոր խոչընդոտները, վերապրեցնենք մեր Եկեղեցին իր մշտական ներկայությամբ մեր ժողովրդի կյանքում, որպեսզի այն, կարող յուրացնելու դարաշրջանի ոգին և զարգացման օրինաչափությունները, ընթանա ժամանակին համաքայլ, իր ներգործությամբ ժամանակը պայմանավորող:

Արդարև, չեմ երկնչում, քանզի Հայ Եկեղեցին այլևս միայնակ չէ իր ժողովրդի առաջնորդության պատասխանատվության մեջ, ինչպես եղել է դարեր շարունակ: Այսօր մեզ հետ է Հայրենի անկախ մեր պետությունը՝ մաքառման և ինքնհաստատման իննամյա գոյությամբ: Թող Աստված սիրով միաբան պահի ազգը և անսասան՝ պետությունն հայոց: Ունենք և զորացնելու ենք Եկեղեցի և պետություն համագործակցությունը, որը, պատմությամբ է փաստված, միշտ հայրենաշեն է, միշտ ազգաշահ:

Խաչի մի նոր ճանապարհ անցանք ազգովի վերջին օրերս: Հեղվեց անմեղ արյունը Հայաստանի Հանրապետության պետական անվանի այրերի: Հանգուցյալների լույս հիշատակին աղոթք մատուցելով՝ բյուր փառք ենք վերառաքում առ Աստված, որ բազմաչարչար մեր ժողովուրդը խոհեմությամբ հաղթահարեց փորձությունը, շրջանցեց խաչի փրկագնով ձեռք բերված մեր անկախությանը և հայրենի մեր պետականությանը սպառնացող վտանգը: Այսօր ուրախ ենք ողջունելու ներկայությունը պետական այրերի՝ գլխավորությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի, Հայաստանի նորընտիր վարչապետ Արամ Սարգսյանի: Աղոթք առ Աստված բարձրացնելով վասն արի ժողովրդին և պետությանը Արցախ աշխարհի, սրտի ուրախությամբ ողջունում ենք ներկայությունը Արցախի Հանրապետության նախագահ տիար Արկադի Ղուկասյանի և Ազգային Ժողովի նախագահ Օլեգ Եսայանի:

Արդարև, չեմ երկյուղում, որքան էլ մարտահրավերներ կան մեր առջև, չեմ երկյուղում նաև այն վստահությամբ, որ ժողովուրդները երրորդ հազարամյակ են մտնում համընդհանուր փոխհամաձայնությամբ և համագործակցության առաջնորդող առողջ գիտակցությամբ, որպեսզի նոր դարաշրջանում հաղթահարվեն ողբերգություններն ու աղետները, պատերազմներն ու ավերածությունները և մշտամնա լինի խաղաղությունը: Գոտեպինդ եմ, քանզի այսօր մեր ժողովրդի, Հայ Եկեղեցու ու Հայաստանի Հանրապետության կողքին են քրիստոնեական քույր Եկեղեցիները, ինչպես նաև բարեկամ պետությունները՝ նախանձախնդիր խաղաղության պահպանման, ժողովուրդների բարեկամության ամրապնդման առաքելության մեջ: Արդարև, «**Զի՛ բարի կամ զի՛ վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին**» /ՍԱՂՄ. ՃԼԲ 1/: Ջերմորեն ողջունում եմ քույր Եկեղեցիների և եղբայրական պետությունների ներկայացուցիչներին, որ այսօր, երբ Լուսավորչի գահից բարձրացվում է սգո քողը, ներկա են և մասնակից աշխարհասփյուռ մեր ժողովրդի բերկրանքին ու խնդությանը:

Առավել աներկյուղ եմ, քանզի զորակից է մեզ Քրիստոսի հաղթական Եկեղեցին, հայոց նվիրյալ բոլոր 131 Հայրապետները, ովքեր իրենց գործերով ու ապրած կյանքով հավատարմորեն պահել են «ժամադրութիւնը

Յիսուսի հետ» և մեզ ավանդել առաքելակերտ ու լուսավորչապսակ Հայ Եկեղեցին: Բյուր օրհնություն նրանց լույս հիշատակին: Որդիական սիրո խոնարհում շիրիմներին մեր նախորդ երկու Հայրապետների՝ երջանկահիշատակ Վազգեն Ա Շինարար Հայրապետի և Գարեգին Ա Ամենայն Հայոց վսեմաշուք Կաթողիկոսի, որոնց հոգեզավակն եմ ու երախտընկալը: Մեր Հայրերի նվիրական ներկայությունը խնկաբույր այս Խորանի վրա երիցս առավել աներկյուղ է դարձնում ինձ և վստահություն ներշնչում Առաքյալի համարձակությամբ ասելու. «**Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեզ հակառակ**» /ՀՌՈՄ. Ը 31/: Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կարող է մեզ հակառակ լինել:

Բոլոր տարակույսներս ու երկյուղներս փարատվում են, քանզի «**Դու ես Տէր, յոյս իմ ի մանկութենէ իմմէ: Դու ես ապաւէն իմ, և առ ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ**» /ՍԱՂՄ. Ղ 5-6/ և կենարար խաչդ է ինձ առաջնորդ:

Քրիստոսի Խաչը, սիրելիներ մեր, 2000 տարի կենաց ճանապարհով դեպի Աստված է առաջնորդում մեր ժողովրդին, իսկ 1700 տարիներ առաջ ամպշող երևաց հայոց երկնակամարում, երբ Տերն արժանի գտավ մեր հողն Իր ոտքի հպումին և հայտնվեց Լուսավորիչ մեծ Հայրապետին՝ մեր առաջին Կաթողիկոս Սուրբ Գրիգորին: Այն օրից, ինչպես մեր մեծ վարդապետներից մեկն է ասում. «**Զի որպէս մի է Հայրն մեր և զամենայն բարիս յանձն իւր կոչաւորեաց, նոյնպէս մի է և միակրօն ազգն հայոց, և ամենայն գերազանց պարգևօք մեծարեալ**» (Հովհաննես Երզնկացի):

Արդարև, Տիրոջ Առաքյալների և Իր ընտրյալների ոտնահետքերով որդեգրելով Խաչի լուսեղեն ճանապարհը՝ բազում պարգևների արժանացանք՝ ազատության, արդարության, բարության ու ճշմարտության շնորհներով փրկության առաջնորդվելով, կերտեցինք ինքնության մեր դիմագիծը որպես ազգ և որպես Եկեղեցի: Դեպի Աստված մեր ընթացքի մեջ հայրենյաց մեր սուրբ հողին խաչքար, վանք ու եկեղեցի շնչավորեցինք, ծաղկող գրչով մատյան երկնեցինք և սերունդներին ավանդեցինք խորհուրդը «մահ իմացեալ»-ի՝ խաչի լուսաբաղձ հավատը կենսավորելով որպես հաղթություն, որպես կյա՛նք իմացյալ:

Ավարտվում է 20-րդ դարը, որ հայության կյանքում սկսվեց եղեռնով՝ մեր պատմական Հայրենիքից աշխարհի բոլոր կողմերը սփռելով մեր ժողովրդի զավակներին՝ այդ հողի բնիկ տերերին: Քաղաքակրթության նվաճումներով ավարտվող դարը, սակայն, տակավին չի արձանագրել հայոց եղեռնը դատապարտող համամարդկային արդարությունը:

Գոհություն Երկնավորին, այսօր հայությունը շտկել է կացնահար մեջքը և բազմաճյուղ տարածել սաղարթը կենաց իր ծառի՝ դարն ավարտելով եռագույնի նոր ծածանումով Հայաստանում և Արցախում:

Այո, նորոգ է այսօր Հարության հույսին խարսխված մեր հավատքը: Համայն քրիստոնյա աշխարհի հետ մենք ևս, որպես Քրիստոսի ժողովուրդ ու Եկեղեցի, տոնախմբելու ենք Աստվածհայտնության 2000-ամյան և հայոց մեծ դարձի՝ Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ճանաչման 1700-ամյան, որ բացառիկ առիթ է, եզակի հնարավորություն ու ներշնչման աղբյուր՝ համախմբվելու համազգային նպատակների շուրջ, լինելու

նորոգյա՛լ Եկեղեցի. «**Միաւասիկ ժամանակ ընդունելի**»: Խաչի սիրո, Խաչի զոհողության, Խաչով հաղթության խորհրդով հոգենորոգ ու միաբան՝ պիտի հաստատենք հավատավոր մեր կամքն ու աներեր վստահությունը՝ կերտելու բարգավաճ, շեն ու բարօր Հայրենիք, ընձյուղելու գալիքին վստահորեն նայող սերունդ և դառնալու բարեկարգ ու բարեշեն Եկեղեցի:

Արդ, սիրելի հավատացյալ ժողովուրդ հայոց, եկեք մեր Հայրերի օրինակով հանապազօր, փյառնագրենք մեր անձերը, վերադարձնենք մեր հարկերից ներս աղոթքը ծնրադիր, որպեսզի հառնի, բարձրանա մեր հոգիներում Տիրոջ կենարար Սուրբ Խաչը, որպեսզի Տերը խաղաղության մեջ ապահով պահի հինավուրց երկիրը և պետությունը Արցախ աշխարհի և անվրդով ու խաղաղ՝ Հայաստանի նորանկախ Հանրապետությունը, և սիրով՝ միաբան մեր ժողովրդին, որպեսզի օրինյալ լինի մեր ընթացքը ժողովուրդների բազմընթաց երթի մեջ՝ դեպի համագործակցության, բարօրության ու երջանկության հանգրվան: Թող Ամենախնամ Աստված հաստատուն ու անսասան պահի Առաքելական մեր Մայր Եկեղեցին, Հայրապետությունն Հայոց ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, թող ծաղկյալ ու բարեշեն պահի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո նվիրապետական Աթոռները, Հայ Եկեղեցու բոլոր թեմերը: Թող Ամենախնամ Աստված Իր Ամենազոր Աջով մարտակից և զորավիգ լինի մեր ողջ հոգևոր դասին՝ Աստծուն, Հայրենիքին ու սիրեցյալ մեր ժողովրդին ի Սփյուռս աշխարհի, իր անսակարկ սպասավորության մեջ:

Կենարար Քո Խաչի խորհրդով, Ով Տեր, նաև ինձ զորացրու և արժանի արա Հույսի, Սիրո, Հարության ճանապարհի անձանձիր ճամփորդը լինելու Եկեղեցուդ սպասավորության և «փոքր ածու»-իդ առաջնորդության մեջ, և թող միշտ ինձ հետ լինի իմաստության և ճշմարտության Հոգիդ, որպեսզի **«ինձ քաւ լիցի պարծել բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:**

«Շնորհք, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանս». Ամեն: